

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԻ ՀԻՆԳՅԱՏՈՐՅԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՌԹԻՎ

ԱԼԵՔՍԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Վերջապես հիմնականում ավարտվեց «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» ստվարածավալ, հինգ հատորից կազմված հրատարակությունը: Սա մի աննախադեպ գործ է Հայ ժողովրդի բազմադարյա մշակույթի պատմության մեջ: Բառարանի պատրաստումը և հրատարակումը իրականացրել են ականավոր դիտնականներ սլատմական աշխարհագրության և աշխարհագրության պատմության բաղում արժեքավոր աշխատությունների հեղինակ, պատմական դիտությունների դոկտոր, պրոֆեսոր Թադևոս Հակոբյանը, բազմավաստակ լեզվարան, մեր դպրության անխոնջ մշակ, ընդհանրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Բարսեղյանը և պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Մելիք-Բախչյանը երկարամյա, բացառիկ ջանքերի ու նվիրումի շնորհիվ: Սա, հիրավի, գիտական մեծ սխրանք է, և դժվար է գերազանահատել այդ աշխատության արժեքը, որն ընդգրկում է 400 հազար քառակուսի կիլոմետր տարածություն և 136 հազար տեղանուն: Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ այս աշխատությունը, ըստ էության, մի հանրագիտարան է, մի կարևոր շտեմարան, որից մշտապես կօգտվեն պատմաբանները, աշխարհագրագետները, հնագետները, աղբյուրագետները, արևելագետները, դիվանագետները և այլ տարրեր մասնագիտությունների մարդիկ:

Քավ լիցի, ես հավակնություն չունեմ խորանալ բառարանի մասնագիտական հարցերի մեջ, բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս գործի ակունքներին մոտ կանգնած մարդկանցից եմ, ցանկանում եմ համառոտ ներկայացնել իմ կարծիքը:

Ամենից առաջ հիշենք, որ բառարանի հեղինակներն իրենց թիկունքում ունեցել են գասական հայագիտությունը, որը դարերի պատմություն ունի: Հայագիտության զարգացման բնագավառում շեշտենք Մխիթարյան միարանության մեծերին, որոնք մեր պատմության առավել դժվարին ժամանակներում, մեծ զոհաբերությունների գնով ազգին սլարդեցին արժեքավոր բազմաթիվ և բազմաբնույթ աշխատություններ, մասնավորապես կերտեցին հոգեոր հայրենիքի դադափարը և այդ անմար ջահը հանձնեցին նոր սերունդներին:

Հայտնի է, որ դեռ վաղնջական ժամանակներում մեր պատմահայր Մովսես Խորենացին նույնպես մասնակիորեն զրադվել է մեր առանձին բնակավայրերի և բնաշխարհի նկարագրությամբ: Տեղանուններով զրադվել են նաև հետագայում, ընդհուպ մինչև նոր ժամանակները: Համանման նկարագրություններ կան նաև գրողների երկերում: Սակայն միայն այս

Հինգհատորյակի շնորհիվ է, որ առաջին անգամ համապարփակ ներկայացվում է Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների և բնաշխարհի նկարագրության գրեթե ամբողջական պատկերը:

Բառարանի ամենակարևոր արժանիքներից է, որ այն սերունդներին վերադարձնում է պատմական Հիշողությունը, մասնավորապես երիտասարդությունը ոգեկոչում է վերադառնալ իր արմատներին, հանգամանք, որ արդիական մեծ նշանակություն ունի ինչպես հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում:

Նշենք, որ քաղաքակիրթ ժողովուրդներից շատ քչերն ունեն նման աշխատություններ: Իմ ձեռքի տակ է 24 հատորից բաղկացած «Ուկրաինայի քաղաքների և գյուղերի պատմություն» ստվարածավալ հրատարակությունը, որ իրագործվել է ակադեմիկոս Պ. Տ. Տրայնկոյի ղեկավարությամբ: Այդ գործին մասնակցում էին Կիևի համալսարանը, ակադեմիական մի շարք ինստիտուտներ և գիտական կենտրոններ:

Իհարկե, Համեմատության եզրեր չկան: Տարբեր են ժողովուրդները, տարբեր են ճակատագրերը, նաև հնարավորությունները:

Երևանի Համալսարանի Հայագիտական կենտրոնը և հեղինակային խումբը, երբ ժամանակին ցանկություն հայտնեցին իրականացնել նմանատիպ հրատարակություն, զարմանալիորեն այդ գործի ճանապարհին կանգնեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Նախարարների խորհրդի հերթական նիստում, երբ քննարկվեց այդ հարցը, ակադեմիայի ղեկավարությունը կարծիք հայտնեց՝ գրել միայն Խորհրդային Հայաստանի գյուղերի և քաղաքների պատմությունը, դուրս թողնելով հարակից շրջանները: Դա արժեզրկում էր հիմնական գաղափարը: Ստիպված էի հարցը հանել քննարկումից: Հետագայում, նեղ շրջանակում քննարկումների ժամանակ այդ գործի ղեկավար Թագևոս Հակոբյանը հիմնավորեց գաղափարի ամբողջականությունը, առաջարկեց հրատարակել «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», որը հայության համար կարող էր բազմակողմանի ծանրակշիռ արժեք ունենալ: Այդպես էլ եղավ:

Բառարանի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանում կարևոր տեղ է հատկացված տարածաշրջանի էթնիկ կազմավորումների և անտիկ աշխարհի հզոր պետությունների հետ Հայ ժողովրդի կապերին ու առնչություններին. մասնավորապես, մեր մերձավոր հարևանների՝ ուսսների, պարսիկների, վրացիների, թուրքերի, ադրբեջանցիների հետ ունեցած ինչպես լեզվամշակութային, այնպես էլ տնտեսական, քաղաքական հարաբերություններին, որոնք տարբեր ժամանակներում երբեմն խաչաձևվել են: Այստեղ ընդգծենք, որ մեծ է բառարանի նշանակությունը նաև թուրքական և ադրբեջանական գործիչների նենգ, ստահոգ, պատմության կեղծարարության քարոզչական արշավի դեմ տարվող պայքարում:

Անհրաժեշտ է նշել, որ Արևմտյան Հայաստանի տեղանունների ցանկը և նկարագրությունները ներկայացված են մինչև Առաջին համաշխարհային պատերազմը: Հայերի ցեղասպանությունը պարբերական բնույթ է կրել հիմնականում XIX դ. կեսից սկսած և ավարտվել արևմտահայ ժողովրդի ցեղասպանությամբ 1915–1923 թթ.: Անգեն հայ բնակչությանը պարբերա-

կան ոչնչացման են ենթարկել Հենց նրա բնօրրանում, նպատակ ունենալով երկրի տերերին դուրս մղել իրենց պատմական Հայրենիքից: Այս Հարցին ես անդրադարձա, որովհետեւ վերջին շրջանում թուրքերը և ադրբեջանցիները պնդում են, թե իրենք են կոտորվել Հայերի կողմից՝ անգն Հայերի, անկաղմակերպ ինքնապաշտպանական ջոկատների և քաջարի Ֆիդայիների պայքարը որակելով... ցեղասպանություն: Ինչպես չհիշես տխրահուշակ Գեքեկսին, որի նշանարանն էր՝ որպեսզի քեզ հավատան ստիր, ստիր լկտիաբար և անընդհատ: Թուրքերն այսօր փորձում են Հենց այդ ճանապարհով հասնել հաջողության: Ամեն ինչ ուրացող թուրքերը այսօր Հայիվ թե հիշեն, որ Հայերն են եղել նրանց նորագույն լեզվի ու լեզվաբանության (այդ թվում՝ բառարանագրության), ճարտարապետության, թատրոնի և մշակութային այլ բնագավառների ստեղծողն ու զարգացնողը: Թուրքերը մշակութային արժեքներ չեն ստեղծել, բայց հարևան ժողովուրդների ստեղծած բարբարոսաբար ոչնչացրել են պարբերաբար: Տեղանունների բառարանում կարմիր թելի նման երեւում է (և հատուկ գրված է-ջեր կան), թե ինչպես ծրագրված ձեռով ոչնչացրին մեր ժողովրդի ջանքերով ստեղծված նյութական և հոգեոր մշակութային արժեքները... Ավերվեցին Վանը, Տարոնը, էրզրումը, Կարսը, Սասունը, Շուշին, Գողթան գավառը իր հրաշք մայրաքաղաք Ազուլիսով, Բաքվի և Գանձակի Հայկական կենտրոնները...

Շատ ցավալի է, որ բառարանի առաջին հատորը լույս ընծայելուց հետո կանգ առավ մեծ գիտնականի՝ Թադևոս Հակոբյանի գրիչը, բայց նրա ջանքերը երեւում են բոլոր հատորներում: Կյանքին հրաժեշտ տվեց նաև նշանավոր պատմաբան Ստեփան Մելիք-Բախչյանը: Վերջին հատորների հրատարակությունը ամբողջապես ծանրացավ Հովհաննես Բարսեղյանի ուսերին, որի համառ ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ գործն ավարտին հասավ: Այս կոթողային աշխատության ստեղծման գործում մեծ ավանդ ունեն Երեանի պետական համալսարանի ռեկտորներ, ակադեմիկոսներ Մկրտիչ Ներսիսյանը, Սերգեյ Համբարձումյանը, Նորայր Առաքելյանը և Ռադիկ Մարտիրոսյանը, համալսարանի Հայագիտական կենտրոնի ջանադիր աշխատողները: Վերջապես, մենք պետք է շնորհակալ լինենք Գյուլրենկյան հիմնադրամին, որի նյութական օգնության շնորհիվ էլ այդ վիթխարածավալ աշխատանքը հասավ ընթերցողին:

Բառարանում կան վրիպումներ և առանձին սխալներ (մասնավորապես առաջին հատորում): Իհարկե, այդպիսի մեծ գործում չեն կարող բացառվել թերացումները, որոնք, անշուշտ, կշտկվեն հետագայում:

Ինքս մոլի բառարանասեր եմ, դա մի յուրատեսակ հիվանդություն է կարծես: Ազատ ժամանակ ձեռքս եմ վերցնում որևէ բառարան (իսկ մենք ընտիր, հարուստ բառարաններ չատ ունենք) և սկսում եմ թերթել, կարդալ... Շահեկան կլինեն բառարանի առանձին հատվածներ թարգմանել ուսուցիչներին, անգլիկներին և ֆրանսիացիներին: